




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԲԵՅՐՈՒԹԻ ԿԱՐՄԻՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՐԵՐԱՐ
ՏԻԱՐ ԳԵՎՈՐԳ ԿԱՐՄԻՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԶԻ Ա ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ
ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԷՈՐԳ ԵՒ ՄԱՐԻ ԿԱՐՄԻՐԵԱՆՆԵՐՈՒՆ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊԷՅՐՈՒՅ

Աստուծոյ ողորմութեամբ Մենք խորապէս մխիթարուած ենք որ ափիւ-
քի տարածքի վրայ, մեր հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ կան ու կը
գործեն պատուական անձինք, որոնք իրենց բարոյական և նիւթական օժան-
դակութեամբ կը շէնցեն ու կը պայծառացեն մեր աղօթքի Տուներն ու կըր-
թական հաւատաւորութիւնները:

Մեր ազգի այդ պատուական զաւակներու հոյլին կը պատկանիք նաև Դուք,
Ձեր թանկագին ծառայութիւններով և նուիրաբերութիւններով: Լիբանանի
մայր քաղաք Պէյրոյի սրտին վրայ բարձրացող, Ձեր անունը կրող կրթա-
կան մեծ հաստատութիւնը՝ Հ. Բ. Ը. միութեան Կարմիրեան վարժարանը Ձեր
կեանքի մեծագոյն իրագործումներէն մին կը հանդիսանայ որ արժանի է
Մեր օրհնութեան և համայն մեր ազգի գնահատանքին: Երբեք պիտի չը-
մոռցուի Ձեր այս մեծ ծառայութիւնը որ պատիւ կը բերէ Ձեր անունին, պա-
ւինի կը բերէ նաև ամբողջ լիբանանահայութեան:

Երբեք պիտի չմոռնանք նաև Ձեր որդիական այնքան ջերմ վերաբերու-
մը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հանդէպ և Ձեր կարևոր նուիրաբերումը
ի պայծառութիւն միածնաւէջ Մայր տաճարին:

Արդ, սրտանց կը գովենք եկեղեցաշէն ու կրթանուէր Ձեր բարի եռանդը
և իբրև վկայութիւնը Մեր հայրապետական գնահատանքին, Ձեզ կը պարգե-
ւատրենք ս. Գրիգոր Լուսաւորչի Ա կարգի շքանշանով, մաղթելով որ ար-
դար հպարտութեամբ զայն կրէք Ձեր բարի սրտին վրայ իբրև օրհնութիւն
սուրբ Էջմիածնէն:

Կ'աղօթենք առ Աստուած որ Զեզի պարգևէ երկար, շատ երկար կենաց տարիներ Զեր ընտանեկան երջանիկ յարկին տակ, որպէսզի միշտ հոգեկան ուրախութիւնը ունենաք կենսագործելու Զեր հոգեշէն ու ազգանուէր ծրագիրները:

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգւով և լաւտ՝ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Հարցի Դ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 21-ը հոկտեմբերի

1974 փրկչական ամի,

և ի տումարիս հայոց ՌՆԻԳ,

ի մայրաթանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՐ. 790

